

Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոս Իվան Գեորգիի Գաբրիելյանի՝ Տարոն Եղիայի Գրիգորյանի <<Հարավային Հայաստանի Էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի Էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոն ֆորամինիֆերների>> ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացվել է ԻՌ.01.01 - <<Ընդհանուր երկրաբանություն>> մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Տարոն Եղիայի Գրիգորյանի կողմից պաշտպանության ներկայացված <<Հարավային Հայաստանի Էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի Էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոն ֆորամինիֆերների>> թեմայով ատենախոսությունը նվիրված է Հարավային Հայաստանի բրածո ծովային ֆաունայի, մասնավորապես իր նշանակությամբ արժեքավոր, իսկ ուսումնասիրությունների առումով բավականին բարդ միաբջիջ օրգանիզմների՝ ֆորամինիֆերների ուսումնասիրությանը և դրանց օգտագործմանը Էոցեն-օլիգոցենի նստվածքային շերտերի կենսաշերտագրության և ժամանակագրության հարցերին:

Իր բնույթով ատենախոսությունը միջառարկայական հետազոտական աշխատանք է պալեոկենդանաբանության, պալեոգենի երկրաբանության, պալեոգեոմորֆոլոգիայի, պալեոկլիմատոլոգիայի և հարակից գիտությունների վերաբերյալ: Հեղինակը ներկայացնում է իր ավելի քան 10 տարիների հետազոտությունների արդյունքները, որոնց հիմնական նպատակն է Հարավային Հայաստանի Էոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի Էվոլյուցիայի և կենսաշերտագրության ուսումնասիրությունն ըստ պլանկտոն ֆորամինիֆերների:

Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել Հարավային Հայաստանի Էոցեն-ստորին օլիգոցենի նստվածքային ավազանի լիթոլոգիական կազմը և նստվածքակուտակման առանձնահատկությունները:
2. Նստվածքներում վերլուծել պլանկտոնային ֆորամինիֆերների կազմը, առանձնացնել շերտագրական կարևոր տեսակների առաջին հայտնվելու և անհետանալու սահմանները, ինչպես նաև համեմատել դրանք տարբեր կլիմայական շրջանների հետ՝ առավել հուսալի շերտագրական սահմանների ճշգրտման համար:
3. Պլանկտոնային ֆորամինիֆերների հիման վրա իրականացնել զոնալ ստորաբաժանումներ և դրանք համադրել տարածաշրջանային և միջազգային ընդունված կենսաշերտագրական սանդղակների հետ:

4. Համադրել պլանկտոնային ֆորամինիֆերների տվյալները այլ միկրոբրածո խմբերի (բենթոս ֆորամինիֆերների, նանոպլանկտոնի տեսակների, ռադիոլարիաների և այլն) տվյալների հետ:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար, ատենախոսի և իր գործընկերների ջանքերով Շաղափի սինկլինալի մոտ 1500 մետր հզորություն ունեցող նստվածքներից հավաքվել է մոտ 400 նմուշ, 20 սմ-ից մինչև 1 մետր նմուշարկման միջակայքով, որոնք օգտագործվել են լիթոլոգիական և հնէաբանական ուսումնասիրությունների համար: Ստացված գիտական արդյունքների արժանահավատությունն ապացուցվում են ատենախոսի կողմից օգտագործված ավանդական և նորագույն մեթոդական մոտեցումներով, ուսումնասիրված նմուշների տեղադիրքերի մանրամասն քարտեզագրմամբ, աղյուսակային և գրաֆիկական վերլուծական նյութերով, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության առաջատար գիտական կենտրոններում իրականացված համատեղ ուսումնասիրություններով:

Տ. Գրիգորյանի ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից: Դրանցից առաջինը նվիրված է ուսումնասիրվող տարածքի երկրաբանական ուսումնասիրությունների համառոտ ակնարկին (ատենախոսության 16-34 էջեր): Այստեղ ատենախոսը մանրամասն ներկայացրել է Հայաստանի պալեոգենի նստվածքային ապարների ուսումնասիրությունները, որոնք բաժանել է երեք հիմնական փուլերի: Նշված գլխում տրվում է նաև պլանկտոնային ֆորամինիֆերների կառուցվածքային առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց կենսաշերտագրության մասին մանրամասն տվյալներ:

Երկրորդ, բավական ընդարձակ գլխում ատենախոսն ինչպես իր, այնպես էլ գրական աղբյուրների հիման վրա տալիս է ուսումնասիրվող տարածքի լիթոշերտագրության և լիթոֆացիալ վերլուծությունը (ատենախոսության 35-63 էջեր): Մանրամասն ներկայացվում են Շաղափի սինկլինալի Ուրցաձորի, Շաղափի, Լանջառի, Ուրցալանջի և Մալիշկայի կտրվածքների կառուցվածքները՝ դրանցում պարունակվող բրածո օրգանիզմների մանրամասն նկարագրություններով:

Ատենախոս Տարոն Գրիգորյանի կատարած աշխատանքների էական մասի արդյունքներն ամփոփված են երրորդ գլխում (ատենախոսության 64-95 էջեր): Այստեղ ատենախոսը մանրամասն վերլուծել և ներկայացրել է նշված կտրվածքների զոնալ ստորաբաժանումները, տվել է դրանց սահմաններն ըստ պլանկտոնային ֆորամինիֆերների ինդիկատոր տեսակների: Մի շարք ստորաբաժանումներում բացակայող ինդիկատոր տեսակներն ատենախոսը հաջողությամբ լրացրել է նանոպլանկտոնային տեսակներով, մասամբ նաև հատակային խոշոր

ֆորամինիֆերներով, նշելով, որ բենթոսային ֆորամինիֆերների տվյալները միշտ չէ, որ համընկել են պլանկտոնային կամ նանոպլանկտոնային տեսակների տվյալների հետ:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են թվով 8 հրատարակված նյութերում, որոնք շարունակաբար հրապարակվել են հանրապետական և միջազգային մասնագիտական ամսագրերում, գեկուցվել են մի շարք գիտաժողովներում, սեմինարներում, ինստիտուտի գիտխորհրդի նիստերում:

Ինչպես բոլոր լայնածավալ գիտական աշխատանքները, քննարկվող ատենախոսությունը և սեղմագիրը նույնպես գերծ չեն որոշ թերի ձևակերպումներից, կենսաբանական նոմենկլատուրային սխալներից, ինչպես նաև որոշ ոճաբանական և ուղղագրական վրիպակներից, որոնցից կարելի է նշել հետևյալները՝

1. Ատենախոսության 17-րդ էջի առաջին պարբերությունը հասկանալի ձևակերպված չէ, կազմում է արդյոք ատենախոսության տեքստի շարունակություն, թե՛ Նկար 3-ի բացատրության շարունակություն:

2. Ատենախոսության և սեղմագրի տեքստերում կան կենսաբանական նոմենկլատուրային վերաբերող որոշ վրիպակներ: Այսպես, սեղմագրի 5-րդ էջի վերջում և 6-րդ էջի սկզբում բերվում են ֆորամինիֆերների տաքսոնների լատիներեն 16 անվանումներ, որոնց բոլորի սեռերի անվանումները կրճատ են գրված, որտեղից չի երևում, թե որ սեռերի մասին է խոսքը: Համաձայն կենսաբանական նոմենկլատուրայի կանոնների, տեքստում առաջին անգամ հիշատակվող տեսակի լատիներեն անվանումը պետք է գրվի ամբողջությամբ: Նույնը կրկնվում է նաև ատենախոսության 9-րդ էջում: Բացի այդ, ցանկալի կլիներ ատենախոսության մեջ գոնե առաջին անգամ հանդիպող բոլոր տեսակների համար նշել տաքսոնների հեղինակներին:

3. Ատենախոսության 100-րդ էջի երրորդ պարբերությունում հիշատակվող *Discocyclina* և *Assilina* անվանումներից հետո «տեսակների» փոխարեն հարկավոր է գրել «տաքսոնների» բառը, քանի որ տվյալ դեպքում նշված են ոչ թե տեսակները, այլ սեռերը:

4. Ատենախոսության էջ 64-ում անհարկի օգտագործվում է «նանոպլանկտոններ» բառը, քանի որ «նանոպլանկտոն» եզրույթն արդեն իսկ հոգնակի թիվ է ենթադրում: Դրա փոխարեն կարելի է գրել նանոպլանկտոնի տեսակներ:

5. Ատենախոսության մեջ և սեղմագրում կան մի շարք ուղղագրական վրիպակներ, որոնք տեխնիկական բնույթ են կրում: Օրինակ՝ սեղմագրի 3-րդ էջում «Պարաթետիսի» փոխարեն գրված է «Պերաթետիս»; 7-րդ էջում «սյունակների» փոխարեն գրված է «սյունյակներ»; 8-րդ էջում Մալիշկայի կտրվածքի նկար 3-րդի փոխարեն գրված է նկար 2; 21-րդ էջում «ֆորամինիֆերների» փոխարեն գրված է «փորամինիֆերներ»; նույն էջում «հանդիպում են»-ի փոխարեն գրված է «հանդիպում են»:

Ատենախոսության 6-րդ էջում «ռադիոլարիաների» փոխարեն գրված է

«ռադիոալարիաների»; 10-րդ էջի ներքևում «պահանջում է»-ի փոխարեն գրված է «պահանջվում է»; 11-րդ էջում պրոքսիդ-ի փոխարեն գրված է «պրոքսիդի», իսկ ներքևում «3 օրը» կարդացվում է «30 օր»; 14-րդ էջում «Չակրևսկայային»-ի փոխարեն գրված է «Չակրևսկային»; 32-րդ էջի վերևում «նումնուլիտներն»-ի փոխարեն գրված է «նումնուլիտներն»; 35-րդ էջում (նկ. 7, 1-5)-ի փոխարեն պետք է լինի (նկ. 7, 3-5); 51-րդ էջում «Կրաշենինիկով»-ի փոխարեն գրված է «Կրաշենինկով»; 54-րդ էջում առկա «ե»-ի փոխարեն պետք է լինի առկա «են»; 56-րդ էջում «Ֆորամինիֆերների» փոխարեն գրված է «Ֆորամինֆերներ» (նույնը և 59, 60-րդ էջերում); 71-րդ էջում արձանագրվել «ե»-ի փոխարեն պետք է լինի արձանագրվել «են»; 78-րդ էջի աղյուսակում «որով»-ի փոխարեն գրված է «ժորով»; նույն էջի ներքևում «ցեղատեսակի» փոխարեն պետք է լինի «սեռի տեսակների»; 82-րդ էջի 32-րդ նկարի ստորին մասի նկարը գլխիվայր է; 83-րդ էջի նկարի բացատրության մեջ «*T. ampliapertura*»-ի փոխարեն գրված է «*T. ampliapertura*»; 104-րդ էջում անջատվել «ե»-ի փոխարեն պետք է լինի անջատվել «են»; 105-րդ էջում օգտագործվել «ե»-ի փոխարեն պետք է լինի օգտագործվել «են»:

6. Ատենախոսության մեջ կան որոշ անհամապատասխանություններ գրականության հղման դեպքերում: Օրինակ՝ 32 էջում նշված է «Ն.Գ. Մուզիլով» հեղինակը, սակայն գրականության ցանկում այդ ազգանունը նշված չէ:

7. Մեր կարծիքով կտրվածքների մեծ մասի ֆորամինիֆերների նկարները քիչ քանակով են ներկայացված, չնայած ակնհայտ է, որ դրանք առկա են: Համեմատության համար նշենք, որ Մալիշկայի կտրվածքից ներկայացված են էլեկտրոնային սկանավորող մանրադիտակով նկարահանած բարձր որակի և կենսաբանական առումով ինֆորմատիվ 33 տեսակի 59 նկար (էջ 90-92): Լանջառի կտրվածքից աշխատանքում ներկայացված են 9 տեսակների նկարներ (էջ 82-83): Ուրցալանջի կտրվածքից տրված են ընդամենը 3 տեսակների նկարներ (էջ 86): Եվ զարմանալի է, որ Ուրցաձորի և Շաղափի կտրվածքներից ֆորամինիֆերների ոչ մի նկար ներկայացված չէ, չնայած այն բանին, որ այս կտրվածքների համար տրված են տեսակների բավականին մեծ ցուցակներ:

Բացի վերոնշյալ դիտողություններից, ունենք հետևյալ առաջարկությունները.

1. Ցանկալի կլիներ ատենախոսությունը ունենար հավելված, որտեղ այբբենական ցուցակով ներկայացված կլինեին ուսումնասիրված ֆորամինիֆերների բոլոր տեսակները:

2. Ցանկալի է, որ սույն ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված և Մոսկվայի Վերնադսկու անվան երկրաբանական թանգարանում պահպանվող նումնուլիտների նմուշների կրկնօրինակները պահպանվեին նաև ՀՀ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

3. Ցանկալի կլիներ, ար ատենախոսության եզրակացությունը ներկայացված լիներ առանձին կետերով՝ դրված չորս խնդիրներին համապատասխան:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրակացնել, որ Տ. Գրիգորյանի ատենախոսության մեջ դրված խնդիրների լուծումները հիմնված են սեփական դիտարկումների ու վերլուծությունների վրա, որոնք շարադրված են ինչպես ատենախոսության տարբեր գլուխներում և ենթագլուխներում, այնպես էլ ամփոփման մեջ: Աշխատանքի եզրակացությունն իր բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսության նպատակին և խնդիրներին, իսկ մեր կողմից կատարված դիտողությունները չունեն սկզբունքային բնույթ և չեն կարող որևէ կերպ ազդել կատարված աշխատանքի որակի վրա:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Տարոն Գրիգորյանի աշխատանքն ունի գիտական մեծ նշանակություն և այն հավասարապես կարևոր է ինչպես երկրաբանական, այնպես էլ կենսաբանական ոլորտների համար: Այս առումով կենսաշերտագրական աշխատանքները որքան որ հետաքրքիր են ու տեղեկատվական, այնքան էլ բարդ են, քանի որ ուսումնասիրողից պահանջում են միջառարկայական բազմաբնույթ գիտելիքներ: Տարոն Գրիգորյանի մոտ այս երկու ոլորտներն էլ հաջողությամբ իրականացվել են և սույն ատենախոսական աշխատանքը դրա ապացույցն է:


Այսպիսով, Տ. Գրիգորյանի «Հարավային Հայաստանի Լոցեն-օլիգոցեն նստվածքային ավազանի էվոլյուցիան և կենսաշերտագրությունը ըստ պլանկտոն ֆորամինիֆերների» ատենախոսությունն իր արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով, բովանդակությամբ, գիտական և գործնական նշանակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող «Հ-ում գիտական աստիճանի շնորհման կանոնակարգ»-ի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Տարոն Եղիայի Գրիգորյանն արժանի է ԻԴ.01.01 - «Ընդհանուր երկրաբանություն» մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
կենս. գիտ. դոկտոր

Ի.Գ. Գաբրիելյան

Կենս. գիտ. դոկտոր, Ի.Գ. Գաբրիելյանի ստորագրությունը հաստատում եմ
Ա. Թախտաջյանի անվ. Բուսաբանության ինստիտուտի գիտական քարտուղար

07.04.2026թ.



Ա. Աշոյան